ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 2 (արտահերթ) ՆԻՍՏԻ

Օրակարգում

1. Հայցորդների ատեստավորում
2. Անվանական կրթաթոշակ հաստատում
3. Ասպիրանտի ղեկավարի և թեկնածուական թեզի վերնագրի հաստատում

1.Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյանը նշեց, որ ատեստավորմանը մասնակցելու են 1-ին տարվա հայցորդներ Ծ.Ս.Բիլյանը և Ա.Ա.Նիգարյանը: Հայցորդները արդենիսկ իրենց կատարած աշխատանքը ներկայացրել են ամբիոններում և ստացել դրական արձագանք: (Հայցորդները կատարած աշխատանքները ներկայացրեցին նաև գիտխորհրդի նիստում:)

ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Ծովինար Սամվելի Բիլյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյանը նշեց, որ Ծովինար Բիլյանը, հանձնել է ոչ մասնագիտական քննությունները և հավաքել է անհրաժեշտ 32 կրեդիտներից՝ 28-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության արդյունքով որոշեց ատեստավորել ԵՊՀ Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Ծովինար Սամվելի Բիլյանին:

ԼՍԵՑԻՆ. – ԵՊՀ Օրգանական քիմիայի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Արթուր Արարատի Նիգարյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյանը նշեց, որ Արթուր Նիգարյանը, հանձնել է ոչ մասնագիտական քննությունները և հավաքել է անհրաժեշտ 32 կրեդիտից՝ 28-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության արդյունքով որոշեց ատեստավորել ԵՊՀ Օրգանական քիմիայի ամբիոնի 1-ին տարվա հայցորդ Արթուր Արարատի Նիգարյանին:

2. Նիստի նախագահ Ա.Ս.Գալստյան- Հարգելի գործընկերներ օրակարգի հաջորդ հարցը անվանական կրթաթոշակների հաստատումն է: Նախքան գիտխորհրդի նիստը բոլորդ ստացել էիք քննարկվող թեկնածուների ակադեմիական թերթիկները, թեկնածուների հարցը քննարկվել է նաև դեկանատի նիստում: Այստեղ հաշվի է առնվում ոչ միայն ուսանողի առաջադիմությունը, այլև նրա հասարակական գործունեությունը և

ակտիվությունը: Թեկնածուները երեքն են Էմիլիա Երիցյան, Արեն Կիրակոսյան և Զեմֆիրա Հովհաննիսյան: Նրանց կրթաթոշակները շարունակվում են:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Սննդի անվտանգության» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Էմիլիա Ալեքսանդրի Երիցյանի

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Զեմֆիրա Արտավազդի Հովհաննիսյանին «Ստեփան Ղամբարյանի» անվան կրթաթոշակը:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - Շարունակել «Քիմիա» բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Արեն Արկադիի Կիրակոսյանին «Դավիթ և Նազելի Չարչյանների» անվան կրթաթոշակը:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյան- Անկասկած այս ուսանողները արժանի են անվանական կրթաթոշակի, սակայն ունենք նաև այլ բարձր առաջադիմությամբ ուսանողներ, որոնք նույնպես արժանի են խրախուսման: Առաջարկում եմ անվանական կրթաթոշակները տրամադրել բակալավրիատի բաժնի ուսանողներին:

Առաջարկը ընդունվեց միաձայն և որոշեցին հնարավորություն դեպքում գտնել հովանավորների, որպեսզի հնարավոր լինի լավագույններին տրամադրել խրախուսական կրթաթոշակներ:

օրակարգի երրորդ հարցում քննարկելու ենք ասպիրանտի ղեկավարի և թեկնածուական թեզի վերնագրի հաստատում, - Ա.Ս.Գալստյան

Լսեցին –Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ Աննա Սոլոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկանի Ա.Ս.Գալստյանը հաղորդեց, որ Աննա Սոլոյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը և այժմ աշխատում է Քիմիա Գ/Հ կենտրոնում, որպես ավագ լաբորանտ: Ամբիոնը քննարկել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է «Բուսական ծագման սննդամթերքում չնորմավորված ծանր մետաղների որոշման եղանակների մշակում» թեման Բ.00.01 «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ՝ ներառելով Բ.00.02 – Վերլուծական քիմիա (Անօրգանական քիմիայի մասով), և գիտական ղեկավար՝ դոցենտ Արմեն Իգնատիոսի Մարտիրյանին:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց. դիմել ԵՊՀ

ռեկտոր պրն.  Հ.Վ.Հովհաննիսյանին միջնորդելու, Մ.Գ. Մանվելյանի անվան «Ընդհանուր և անօրգանական քիմիայի»  ինստիտուտին, հաստատելու ասպիրանտ Աննա Սոլոյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման «Բուսական ծագման սննդամթերքում չնորմավորված ծանր մետաղների որոշման եղանակների մշակում» վերնագրով: «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ,    Բ.00.01 ծածկագրով՝ ներառելով Բ.00.02-Վերլուծական քիմիա (Անօրգանական քիմիայի մասով), իսկ ղեկավար հաստատել դոցենտ Արմեն Իգնատիոսի Մարտիրյանին:

Խորհրդի նախագահ, `

Քիմիայի ֆակուլտետի դեկան                    Ա.Ս.Գալստյան

Գիտ. քարտուղար, դոցենտ`                    Մ.Ա.Սամվելյան